ԵՐՎԱՆԴ ԼԵՎՈՆԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ
(հասցե՝ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Աբովյան փ. 6 շ, բն. 4)

«ՎԱՍՍԵՌՄԱՆՆ» ՍՊԸ-ից
(գրանցման համար՝ 282.110.1298098, ՀՎՀՀ՝ 01051323,
ծանուցման հասցե՝ ք. Երևան, Ամիրյան 27, տարածք 8)
ՏՆՕՐԵՆ՝ ԱՂԱՎՆԻ ԱԼՈՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(01.03.2023 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը (գրանցամատյանի համար՝ 2400) լուծելու մասին)

Հարգելի՛ պարոն Արզումանյան,

«ՎԱՍԵՌՄԱՆՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Վարձակալ) և ՀՀ քաղաքացիներ Երվանդ Լևոնի Արզումանյանի և Սամվել Լևոնի Արզումանյանի (այսուհետ երկու վարձատուները միասին հիշատակվելու դեպքում նաև՝ Վարձատու) միջև Երևան քաղաքում 01.03.2023 թվականին կնքվել է քաղաք Երևան, Չարենցի փողոց, շենք 9, տարածք 51 հասցեով 140.2 (մեկ հարյուր քառասուն ամբողջ երկու) քառակուսի մետր անշարժ գույքի վարձակալության պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Հայտնում ենք Ձեզ, որ Վարձակալը միակողմանիորեն վաղաժամկետ լուծում է Պայմանագիրը և, հիմք ընդունելով, Պայմանագրի 5.2 կետը, սույն գրությամբ ծանուցում ենք Ձեզ, որ Պայմանագիրը կհամարվի լուծված 2024 թվականի հունիսի 14-ից: Նշված ժամկետից հետո կդադարեն Վարձակալի համար Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները:

Խնդրում ենք Ձեզ, 2024 թվականի հունիսի 14-ին ժամը 13:00 ներկա գտնվել քաղաք Երևան, Չարենցի փողոց, շենք 9, տարածք 51 հասցեում՝ վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքի հանձնում-ընդունումը կազմակերպելու նպատակով:

Միևնույն ժամանակ առաջարկում ենք Ձեզ երկկողմ համաձայնությամբ Պայմանագիրը վերոնշյալ ժամկետից առավել վաղ լուծել:

Սույն գրության հետ կապված ցանկացած հարցի առնչությամբ կարող եք զանգահարել +374 91450771 հեռախոսահամարով:

Հարգանքով՝

«ՎԱՍՍԵՌՄԱՆՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝ ԱՂԱՎՆԻ ԱԼՈՅԱՆ